Կարգապահակ գործ թիվ ԿԳ-15021

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հուլիսի 06-ի թիվ 119-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/78-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՈՒՄՐՇԱՏՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, Նախագահությամբ՝ Խորհրդի անդամ Կարեն Սարդարյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյանի, Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի, Ալեքսանդր Սիրունյանի և Տիգրան Խուրշուդյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

06.07.2015թ.-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Արմեն Ումրշատյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 385) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

Քաղաքացի Էմմա Կիրակոսյանը (այսուհետ նաև՝ Դիմող) 11.02.2015թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված դիմումով խնդրել է պատասխանատվության ենթարկել փաստաբան Ա. Ումրշատյանին՝ բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու, հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու, Դիմողի հեռախոսազանգերին չպատասխանելու և գործի լուծումը հօգուտ Դիմողի հավաստիացնելու համար:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>

2015 թվականի փետրվարի 25-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Արմեն Ումրշատյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 60-Ա/ԿԳ-15021 որոշումը, համաձայն որի որոշվել է.

«1. Էմմա Կիրակոսյանի դիմումի հիման վրա փաստաբան Արմեն Ումրշատյանի (արտոնագիր թիվ 385) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 և 3.1.10 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-15021):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Էմմա Կիրակոսյանին:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

- սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին և փաստաբան Արմեն Ումրշատյանին՝ պարզաբանելով նրանց "Փաստաբանության մասին" ՀՀ օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները»:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1 Դիմողի դիմումի և բացատրության համառոտ բովանդակությունը.

Դիմող՝ Էմմա Կիրակոսյանն իր կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված 11.02.2015թ. դիմումով հայտնել է հետևյալը.

Իրեն և իր որդիներին, որոնք բնակվում են ՌԴ-ում, սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Սարի Թաղ 2-րդ շարք 3 տ. հասցեում գտնվող տանը հարակից հողամասի սեփականատերը որոշել է իր հողամասում կառուցել երկհարկանի բնակելի շենք, որի կառուցապատման նախագծից պարզ է դարձել, որ այն կխախտի Դիմողի իրավունքները, քանի որ փակելու է իր տան լուսավորությունը:

Նշված խնդրի վերաբերյալ Դիմողի որդին դիմել է Պատասխանողին, հեռախոսով խոսացել է նրա հետ և ձեռք է բերել պայմանավորվածություն՝ Դիմողի շահերի պաշտպանության վերաբերյալ:

27.08.2014թ-ին Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Դիմողը հայտնել է, որ պայմանավորվածության համաձայն՝ փաստաբանը պետք է հայցադիմում ներկայացներ դատարան՝ Դիմողի սեփականության իրավունքի խախտումը վերացնելու և շինարարական աշխատանքները մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կասեցնելու նպատակով:

Դիմողը նշել է, որ 27.08.2014թ-ից նա, իր որդին և հարսը տարբեր ժամանահատվածներում զանգահարել են Պատասխանողին՝ իրենց գործի մասին տեղեկանալու համար, սակայն կամ չէր պատասխանում, կամ էլ հայտնում էր սուտ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Ըստ Դիմողի՝ Պատասխանողը հավաստիացրել է, որ հայցադիմում է ներկայացրել դատարան, որ դատական նիստեր են տեղի ունեցել, որ շուտով վճիռ կկայացվի, որ գործն իր օգտնին կլուծվի և այլն:

Հետագայում Դիմողը պարզել է, որ հայցադիմումը ներկայացվել է ոչ թե իրենց կողմից, այլ իրենց հարևանի կողմից՝ իրենց դեմ: Երբ Դիմողի որդին փորձել է պարզել, թե ինչ է տեղի ունենում, Պատասխանողը վիճաբանել է նրա հետ, իսկ հետագայում խուսափել է հեռախոսազանգերին պատասխանելուց:

Պատասխանողի հետ կապ հաստատելուց հետո Դիմողը հայտնել է նրան, որ իր գործողությունների դեմ բողոք է ներկայացնելու համապատասխան մարմիններ, ինչից հետո Պատասխանողը 14.10.2014թ-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ գործում որպես պատասխանողի ներկայացուցիչ ներգարվվելու մասին, ինչպես նաև ներկայացրել է հայցադիմումի պատասխան:

Դրանից հետո Պատասխանողը ևս երկու ամիս որևէ գործողություն չի ձեռնարկել, և միայն 08.12.2014թ-ին դատարան է ներկայցրել հակընդդեմ հայցադիմում, որը սակայն վերադարձվել է: 15.12.2014թ-ին Պատասխանողը ներկայացրել է նոր հակընդդեմ հայցադիմում, որը սակայն նույնպես վերադարձվել է: Դատարանի կողմից տրամադրվել է եռօրյա ժամկետ՝ հայցադիմումում առկա թերություններն ուղղելու և այն կրկին ներկայացնելու համար, սակայն Պատասխանողը դա չի արել:

Դիմողի հարսը Պատասխանողից պահանջել է նրանց գործի ողջ նյութերը, որոնք ցույց է տվել տարբեր մասնագետների: Հասկանալով, որ Պատասխանողն իր պայմանագրային պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ, Դիմողը պահանջել է լուծել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, ինչին Պատասխանողը պատասխանել է, որ նման պահանջը պետք է գրավոր ներկայացվի, ինչպես նաև պահանջել է վճարել պայմանագրով նախատեսված մնացած գումարը:

Դիմողը դիմել է Պալատին՝ պահանջելով պատասխանատվության ենթարկել Պատասխանողին:

23.04.2015թ-ին Դիմողը իր փաստաբան Արմեն Ղազարյանի հետ ներկայացել է բացատրություն տալու համար: Նրան ներկայացվել է Պատաստանողի 23.03.2015թ-ի գրավոր բացատրությունը, որին նա ցանկացել է պատասխանել գրավոր կերպով՝ իր փաստաբանի օգնությամբ:

Պատասխանելով կարգապահական գործը նախապատրաստողի հարցերին Դիմողը հայտնել է հետևյալը.

- Հեռախոսազանգերին չպատասխանելու մասով.

Մինչև 2014թ-ի դեկտեմբերը Դիմողը, նրա ընտանիք անդամները (Մոսկվայում բնակվող որդին և նրա կինը) ակտիվ կապի մեջ են եղել Պատասխանողի հետ: Պատասխանողը հավաստիացրել է, որ գործով արդեն իսկ կա վճիռ՝ Դիմողի օգտին լուծմամբ: Դիմողի հարսը խնդրել է ուղարկել վճիռը, սակայն Պատասխանողը ձգձգել է, իսկ այնուհետև ընդհանրապես դադարեցրել է Դիմողի ու նրա հարազատների հեռախոսազանգերին պատասխանելը: 2015թ-ի հունվարի 2-ին Դիմողի հարսը ժամանել է Երևան, որպեսզի անձամբ զբաղվի այդ գործով, սակայն Պատասխանողը անընդմեջ խուսափել է հանդիպել վերջինիս հետ և պատասխանել նրա զանգերին:

Հեռախոսային զանգերի վերծանում ներկայացնելու մասով Դիմողը պատասխանել է, որ քաղվածքում ցանկալի տվյալը չի երևա, քանի որ ծրագիրը չի արձանագրում բաց թողնված զանգերը:

- Գործի՝ հօգուտ Դիմողի լուծման մասին հավաստիացում տալու մասով.

Դիմողը նշել է, որ Պատասխանողը ներկայացել է իրենց տուն, ուսումնասիրել կառուցվող շինությունը, իր բջջային հեխառոսով նկարել է այն, այնուհետև հայտնել է հետևյալը. «Սա լինող գործ է, մայրիկ, մի մտածի, մենք սենց գործեր ենք արել»: Այնուհետև Դիմողի որդու հետ հեռախոսազրույցի ժամանակ նույնպես ասել է «սա լինող գործ է» և նշել է իր ծառայությունների վճարի չափը:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է իր փաստաբանի հետ մասին, պնդել է դիմումում արտահայտած իր դիրքորոշումը, ինչպես նաև Խորհրդին տրամադրել է ք. Երևան, Սարի Թաղ 2-րդ շարք 3 տ. անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը հավաստող 19.04.1993թ-ին տրված սեփականության վկայագիր:

Պատասխանելով Խորհրդի հարցերին, Դիմողը բացատրություն է տվել այն մասին, որ ք. Երևան, Սարի Թաղ 2-րդ շարք 3 տ. անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը գրանցված է, ուստի նրա կողմից Պատասխանողի առջև սեփականության իրավունքը գրանցելու հանձնարարություն չի դրվել, և նա տեղյակ չի եղել այն մասին, որ պայմանագրով նման պայման է նախատեսվել:

3.2 Պատասխանողի բացատրության համառոտ բովանդակությունը.

Պատասխանող Արմեն Ումրշատյանը 23.03.2015թ. Պալատ է ներկայացրել գրավոր բացատրություն, նշելով հետևյալը.

- Դիմողին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու և հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու վերաբերյալ.

Պատասխանողը հայտնել է, որ Դիմողը պայմանագիրը կնքելու պահին իր առջև չի դրել հանձնարարություն՝ շինարարական աշխատանքների իրականացումը դադարեցնելու պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան: Սեփականության իրավունքի խախտումների վերացման և շինարարությունն արգելելու խնդիր բարձրացվել է միայն 2014թ-ի նոյեմբերին՝ Դիմողի որդու կողմից:

Հղում է կատարել 27.08.2014թ-ի փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1 կետին, և հայտնել է, որ պայմանավորվածության համաձայն՝ նախ պետք է իրականացվեր սեփականության իրավունքի գրանցում, հետո նոր իրավունքի խախտումները վերացվեին:

Բացի այդ, նշում է, որ 27.08.2014թ-ի պայմանագրի 3.1 կետի համաձայն փաստաբանական ծառայությունների մատուցումը պետք է սկսեր վարձավճարը ստանալու հետո, որը սակայն Դիմողի կողմից այդպես էլ ամբողջությամբ չի վճարվել:

Պատասխանողն ընդունել է Դիմողի այն պնդումը, որ հայցադիմումը ներկայացվել է ոչ թե իրենց կողմից, այլ իրենց հարևանի կողմից՝ իրենց դեմ, պատճառաբանելով, որ նման հայցադիմում ներկայացնելու պատճառն է հանդիսացել այն, որ Պատասխանողը տարբեր գործողություններով և գրություններով անհնարին է դարձրել շինարարական աշխատանքներն իրականացնելը: Ուստի Դիմողի հարևանները դիմել են դատարան ընդդեմ Դիմող՝ պահանջելով շինարարական աշխատանքներին չխոչընդոտել: Բացի այդ, Պատասխանողն ավելացնում է, որ 2014թ-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին դեռևս առկա չէր Դիմողի սեփականության իրավունքի գրանցում:

Պատասխանողը գտնում է, որ 16.01.2015թ-ի դրությամբ կատարել է իր առջև դրված բոլոր հանձնարարությունները՝ կատարելով հետևալ գործողություններ.

- 27.08.2014թ. – պայմանագրի կնքում,
- 01.09.2014-15.09.2014թ. – փաստաթղթերի հավաքում, դիմումների հանձնում և այցելություն քաղաքապետարան, թաղապետարան, փորձագիտական կենտրոն և ոստիկանություն,
- 29.09.2014թ-ին Դիմողի դեմ հայցադիմում է ներկայացվել,
- 14.10.2014թ. – պատասխանողի ներկայացուցիչ ներգրավվելու դիմումի ներկայացում,
- 20.10.2014թ. – հայցադիմումի պատասխանի ներկայացում,
- 08.12.2014թ.- հակընդդեմ հայցի ներկայացում, հայցի ապահովման միջոցի վերաբերյալ միջնորդության ներկայացում,
- 17.12.2014թ. - հակընդդեմ հայցի կրկին ներկայացում,
- 22.12.2014թ. – հետադարձ ծանուցմամբ վարչական հայցապահանջի առաքում կողմերին,

- 29.12.2014թ. – հայցադիմումի մուտքագրում ՀՀ Վարչական դատարանին,
- 16.01.2015թ. – հայցադիմումի վարույթ ընդունում և վարչական ակտերի կասեցում:

- Հեռախոսազանգերին չպատասխանելու վերաբերյալ.

Պատասխանողը հայտնել է, որ Դիմողի այդ պնդումն իրականությանը չի համապատասխանում, քանի որ բազմիցս հանդիպել է Դիմողի և իր ազգակցականների հետ՝ թե Դիմողի տանը, թե այլ վայրերում, բազում անգամներ հեռախոսազրույցներ է ունեցել նրանց հետ և անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացնել համապատասխան վերծանումները:

- Գործի լուծումը հօգուտ Դիմողի հավաստիացնելու վերաբերյալ.

Հերքել է իր կողմից գործի դրական ելքը երաշխավորելու հանգամանքը:

Սույն կարգապահական գործը նախապատրաստողի կողմից Պատասխանողը հրավիրվել է բացատրություն տալու համար, ինչպես նաև վերջինիս առաջարկվել է ներկայացնել Դիմողի և իր ընտանիքի անդմաների հետ հեռախոսազանգերի վերծանումները: Մինչդեռ, Պատասխանողը բացատրություն տալու համար չի ներկայացել և վերծանումները չի տրամադրել:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի վայրի և ժամանակի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Մարիամ Ղուլյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2015 թվականի մայիսի 04-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Հաշվի առնելով գործի բնույթը, Նախապատրաստողը գտնում է, որ ենթադրվում էր ծառայությունների ավելի արագ կատարման և հրատապ արձագանքման անհրաժեշտությունը և հաստատված է համարում, որ փաստաբանի գործողություններում կարող է առկա լինել ծառայությունների ոչ ժամանակին մատուցում…

Պատասխանողի կողմից Դիմողի հեռախոսազանգերին պատասխանելուց խուսափելը հաստատված համարել չի կարող ապացույցների անբավարարվածության պատճառով...

Պատասխանողի կողմից գործի լուծումը հօգուտ Դիմողի հավաստիացնելը հաստատված համարել չի կարող ապացույցների անբավարարվածության պատճառով»:

04.05.2015թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հուլիսի 06-ին, ժամը՝ 20:15-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը և սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին տրված բացատրությունները, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողին և Ղուկաս, Արսեն ու Արթուր Տոնոյաններին սեփականության իրավունքով պատկանում է ք. Երևան, Սարի Թաղ 2-րդ շարք 3 տ. անշարժ գույքը, ինչը հաստատվում է 19.04.1993թ-ին տրված սեփականության վկայագրով,

2. 27.08.2014թ-ից սկսած Պատասխանողը՝ Դիմողի հանձնարարությամբ, վերջինիս պետք է մատուցեր փաստաբանական ծառայություններ՝ սեփականության իրավունքի խոչընդոտները վերացնելու հետ կապված քաղաքացիական գործի շրջանակներում, ինչը հաստատվում է 27.08.2014թ-ի ծառայությունների մատուցման պայմանագրով:

2. 2014թ.-ի սեպտեմբերին Դիմողի հարևանների կողմից Դիմողի դեմ հարուցվել է դատական գործ, որին Պատասխանողը ներգրավվել է 2014թ. հոկտեմբերին և ներկայացրել է հայցադիմումի պատասխան, իսկ 2014թ-ի դեկտեմբերին երկու անգամ ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում, որոնցից երկուսն էլ դատարանի կողմից վերադարձվել են՝ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով, ինչը հաստատվում է Դիմողի

դիմումով և բացատրությունով, Պատասխանողի բացատրությունով և համապատասխան դատական գործի քաղվածքով ու դատավարական փաստաթղթերով:

3. Պատասխանողը Դիմողի անունից 30.12.2014թ-ին ՀՀ վարչական դատարան ներկայացրել է հայցադիմում ընդդեմ Դիմողի հարևանների՝ 10.02.թիվ 10 02.04.2014թ. առաջադրանքը, 07.05.2014թ. թիվ 15 շինարարության թույլատվությունն անվավեր ճանաչելու և տան սեփականատերերի իրավունքի խախտումները վերացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որը դատարանի կողմից ընդունվել է վարույթ, ինչը հաստատվում է Պատասխանողի բացատրությունով և համապատասխան դատական գործի քաղվածքով ու դատավարական փաստաթղթերով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 06.07.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Արմեն Ումրշատյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 28.02.2000թ.-ին: 2006-2015թթ. վերջինիս նկատմամբ հարուցվել է 8 կարգապահական վարույթ (ավարտված վարույթներ), ինչպես նաև բացի սույն վարույթից առկա է ևս մեկ ընթացիկ վարույթ:

Տեղեկանքի հավելվածը հանդիսացող աղյուսակի համաձայն Արմեն Ումրշատյանի նկատմամբ հարուցված և ավարտված կարգապահական վարույթներից՝

- Երկուսը հարուցվել են անդամավճարի պարտք ունենալու հիմքով, որոնցից երկուսն էլ կարճվել են՝ արտոնություն կիրառելու հիմքով,
- Մեկը հարուցվել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.2.2, 2.7.2 և 3.6.1 ենթակետերի հիմքով, և կարճվել է,
- Երկու կարգապահական վարույթներով Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության տեսքով և տույժերը մարվել են (մեկը՝ 2006թ. ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի հիմքով, մյուսը՝ Կանոնագրքի 2.6.1, 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով)

Բացի այդ,

- 22.02.2013թ. թիվ 6ԿԳ/1-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, և տույժը չի մարվել,
- 03.10.2014թ. թիվ 157ԿԳ/1 որոշմամբ Կանոնագրքի 2.2.1, 2.2.2 և 2.7.2 ենթակետերի խախտման հիմքով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 150.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, և տույժը չի մարվել,

- 10.02.2015թ. թիվ ԿԳ/29-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, ինչպես նաև իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով և տույժը չի մարվել:

Ինչ վերաբերվում է Արմեն Ումրշատյանի նկատմամբ հարուցված և ընթացիկ կարգապահական վարույթին, ապա այն հարուցվել է Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով Պատասխանողի բացատրությունը, Խորհուրդը գտնում է, որ 11.02.2015թ. հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբան Արմեն Ումրշատյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ մնացած հիմքերով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն. «Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը»:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից»:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմերի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը չգիտեր իրավունքի համապատասխան ճյուղը, թերի էր ուսումնասիրել կամ չէր ուսումնասիրել վստահորդի հանձնարարությանը վերաբերող հանգամանքները, չէր կատարել հանձնարարության պատշաճ

կատարման համար անհրաժեշտ գործողությունները, կամ այդ գործողությունները կատարել է ոչ բարեխիղճ և/կամ ոչ ժամանակին, ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդներ չի տվել և/կամ չի պաշտպանել իր վստահորդին:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է 27.08.2014թ-ին, մինչդեռ պայմանագրով տրված հանձնարարության՝ սեփականության իրավունքի խախտումը վերացնելու, հետ կապված առաջին ըստ էության ճիշտ և հանձնարարությանը համապատասխանող գործողությունը՝ ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնելը, կատարվել է 30.12.2014թ-ին, այսինքն՝ հանձնարարությունն ընդունելուց ավելի քանի 4 ամիս անց:

Ինչ վերաբերում է մինչ այդ կատարված գործողություններին, ապա Պատասխանողի կողմից 2014թ. հոկտեմբերին թիվ ԵԷԴ/2978/02/14 քաղաքացիական գործով ներգրավվելը և հայցադիմումի պատասխան ներկայացնելը չեն բխում 27.08.2014թ-ի պայմանագրով տրված սեփականության իրավունքի խախտումը վերացնելու հանձնարարությունից, ուստի Պատասխանողի այս գործողությունները չեն կարող դիտարկվել որպես հանձնարարության պատշաճ և ժամանակին կատարմանն ուղղված գործուղություններ:

Բացի այդ, Պատասխանողի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով հայցադիմումի պատասխանին ներկայացվող պահանջներին, մասնավորապես, դրանում առկա չէ հայցում ներկայացված պահանջի դեմ պատշաճ առարկությունը, հետևյալ հարցերի անդրադարձով.

ա) հայցի հիմքում ընկած այն փաստերը, որոնք չեն ընդունվում,

բ) արդյոք հայցվորի ներկայացրած փաստերն էական նշանակություն ունեն գործի լուծման համար,

գ) այն փաստերը, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցները, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված:

Ուստի, Պատասխանողի կողմից ներկայացված «հայցադիմումի պատասխան» անվանումով փաստաթուղթն ըստ էության իրենից ներկայացնում է ծանուցում՝ հետագայում Երևանի քաղաքապետի որոշումը վիճարկելու պահանջով հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու մտադրության մասին, և չի կարող դիտարկվել որպես հանձնարարության պատշաճ և ժամանակին կատարման ուղղված գործուղություն:

Անդրադառնալով Պատասխանողի կողմից 2014թ-ի դեկտեմբերին ներկայացված երկու հակընդդեմ հայցադիմումներին, Խորհուրդն արձանագրում է, որ առաջին անգամ՝ 08.12.2014թ-ին է հակընդդեմ հայցադիմումը ներկայացվել սեփականության իրավունքի

խոչընդոտները վերացնելու, այն է՝ Երևան քաղաքի Էրեբունու վարչական շրջանի ճարտարապետահատակագծային 02.04.2014 թվականի թիվ 10 առաջադրանքը և 07.05.2014 թվականին ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից տրված թիվ 15 շինարարության թույլտվությունը մասնակի անվավեր ճանաչելու, ք. Երևան, Սարի Թաղ 2-րդ շարքի թիվ 3 տան սեփականատերերի իրավունքի խախտումները վերացնելուն պարտավորեցնելու՝ այն ՀՀ գործող ՇՀՈՒկ 2.01.07-89 նորմի 2.12 կետով սահմանված շինությունների միջև հեռավորությանը, դիտելիությանը, բնական լուսավորությանը և արևահարության ռեժիմի պահանջներին համապատասխանեցնելու պահանջների մասին:

Վերը նշված հակընդդեմ հայցադիմումը դատարանի 09.12.2014թ-ի որոշմամբ վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ նման պահանջն ընդդատյա է ոչ թե ընդհանուր իրավասության դատարանին, այլ՝ վարչական դատարանին:

Մինչդեռ, Պատասխանողը, ստանալով դատարանի վերը նշված որոշումը, ոչ թե հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան, այլ կրկին 15.12.2014թ-ին հակընդդեմ հայցադիմումով դիմել է ընդհանուր իրավասության դատարանին: Ավելին, ձևական փոփոխելով հայցային պահանջի ձևակերպումը, ըստ էության ներկայացրել է նույն հայցապահանջը, որը դատարանի 17.12.2014թ-ի որոշմամբ կրկին վերադարձվել է:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Պատասխանողի կողմից հակընդդեմ հայցադիմումներ ներկայացնելը նույնպես չի կարող դիտարկվել որպես հանձնարարության պատշաճ և ժամանակին կատարմանն ուղղված գործուղություն:

Անդրադառնալով Պատասխանողի գրավոր բացատրության մեջ այն պատճառաբանությանը, որ սեփականության իրավունքի խախտումը վերացնելու պահանջ չէր կարող ներկայացվել, քանի որ 2014թ-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամսիների դրությամբ առկա չէր Դիմողի սեփականության իրավունքի գրանցում, Խորհուրդն արձանագրում է, որ ի թիվս այլ անձանց Դիմողի սեփականության իրավունքը ք. Երևան, Սարի Թաղ 2-րդ շարք 3 տ. անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է դեռևս 1993-ին, ինչի վերաբերյալ 19.04.1993թ-ին տրվել է սեփականության վկայագիր:

Ավելին, Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողի կողմից անհրաժեշտ գործողությունների (վարչական դատարան վիճարկման հայց ներկայացնելը) ոչ բարեխիղճ և ոչ ժամանակին կատարման արդյունքում Դիմողի հարևանների կողմից ավարտին են հասցվել Դիմողի իրավունքները խախտող շինարարական աշխատանքները:

Փաստորեն, Պատասխանողի գործողություններից ակնհայտ է դառնում, որ վերջինս չգիտեր իրավունքի համապատասխան ճյուղը, թերի էր ուսումնասիրել վստահորդի հանձնարարությանը վերաբերող հանգամանքները, չէր կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունները,

ինչպես նաև այդ գործողությունները կատարել է ոչ բարեխիղճ և ոչ ժամանակին՝ գիտակցաբար և ջանասիրաբար չպաշտպանելով իր վստահորդին:

Հետևաբար, Պատասխանողի կողմից թույլ է տրվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 կետի պահանջի խախտում:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում փաստաբան Արմեն Ումրշատյանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես այն, որ վերջինիս կողմից նախկինում հինգ անգամ թույլ է տրվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտում, որի համար սահմանված ***տույժերից երեքը չեն մարվել են:***

Կանոնագրքի 9.1.2 ենթակետի համաձայն. «Կարգապահական խախտում կատարելու համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելը համարվելու է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, բացառությամբ սույն կանոնագրքի 2.9 կետում նշված դեպքերի»:

Այսպես, Պալատի 06.07.2015թ-ի նիստին նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում Պատասխանողը երկու անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջի խախտման համար, ինչից հետո սույն կարգապահական գործի շրջանակներում թույլ է տվել նույն ենթակետի խախտում:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Պատասխանողը դիտավորությամբ կատարել է ակհայտ կոպիտ խախտում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել միայն դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:

Տվյալ դեպքում Պատասխանողը թույլ է տվել դիտավորությամբ ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, բացի այդ, վերջին մեկ տարվա ընթացքում ևս երկու անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև ունի երեք չմարված տույժ:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում անհրաժեշտ է ընտրել «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժի տեսակը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.10 ենթակետի համաձայն. «Փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում»:

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականաման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 և 3.1.10 ենթակետերի խախտում թույլ տալու փաստերը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը, ուստի նա կրում է նշված փաստերի ապացուցման պարտականությունը:

Միչդեռ, Դիմողի կողմից վերը նշված փաստերը հավաստող որևէ ապացույց չի ներկայացվել:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-ից 39.9-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Ումրշատյանին (արտոնագիր՝ 385) մեղավոր ճանաչել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արմեն Ումրշատյանի նկատմամբ նշանակել կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

3. Դադարեցնել Արմեն Ումրշատյանին տրված թիվ 385 փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը՝ այն ուժը կորցրած ճանաչելով:

4. Փաստաբան Արմեն Ումրշատյանի (արտոնագիր՝ 385) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 և 3.1.10 ենթակետերի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արմեն Ումրշատյանին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
Փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան